

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԺԳ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Գ. Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո հայոց եկեղեցու համար բավական բարդ ու լարված իրավիճակ էր ստեղծվել, ուստի արտաքին ու ներքին միջամտություններին ենթակա և մշտական նստավայր չունեցող կաթողիկոսությունը հաքկադրված տեղից տեղ էր տեղափոխվում: Նման պայմաններում խախտվում էին կաթողիկոսության կազմակերպման որոշ սկզբունքներ, մասնավորապես այն կորցնում էր ավանդաբար իր իրավասության դաշտում գտնվող որոշ իրավունքներ և հաքկադրաբար փորձում յուրացնել նորերը: Հասկանալի է, որ այլ էր իրավիճակը, երբ կաթողիկոսությունը գործառու էր պետականության կառույցում և միանգամայն ուրիշ՝ նրա բացակայության պայմաններում, ըստ այդմ էլ խախտվում էին նրա կազմակերպման կենտրոնաձիգ-տեղագրական սկզբունքները: Վիճակն ավելի բարդացավ ԺԱ դարի երկրորդ կեսին, երբ Մերձավոր Արևելքում ձևավորված հայկական քաղաքական կառույցներից յուրաքանչյուրն աշխատում էր կաթողիկոսությունը տեղափոխել իր իշխանության տարածք, ըստ այդմ էլ կաթողիկոսական աթոռը Հայաստանից այլ տարածաշրջան տեղափոխելու տրամադրություններ էին ձևավորվում: Միանտություն կլիներ կարծել, որ այս տրամադրությունների հիմքը միայն հասարակական-քաղաքական անհրաժեշտության գիտակցումն էր, քանզի երբեմն գեներալներն էր նպատակահարմարության սկզբունքը:

Հայ բնակչության արտաքին տեղաշարժերի պատճառով արմատապես փոխվել էր նրա աշխարհագրական տեղաբաշխման քարտեզը: Մերձավոր Արևելքում հաստատվել էր հոծ զանգվածով հայ բնակչությունը. նրանք հնարավորության դեպքում փորձում էին բնավորվել համատեղ: ԺԱ դ. երկրորդ կեսին Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայում ձևավորված հայկական իշխանությունները վկայում են տարածաշրջանում հայկական էթնիկ տարրի վրա հիմնված քաղաքական միջավայրի մասին, դեպի ուր կազմակերպվում էր նաև հայոց եկեղեցին, որն իր պատմական առաքելությունն առաջին հերթին համարում էր հայ բնակչության հոգևոր ինքնապահպանման հիմնախնդիրը լուծելը: Սելջուկ-թուրքական արշավանքների, խաչակրության ծավալման և քրուզանդական կայսրության արևելյան քաղաքականության ակտիվացմանը զուգընթաց՝ Մերձավոր Արևելքը, այդ թվում՝ հայկական իշխանությունները, ընդգրկվում էին ռազմաքաղաքական և եկեղեցական լարված փոխհարաբերությունների համակարգ, ուր խաչածևվում էին տարաբնույթ շահեր և հետաքրքրություններ: Հարկ ենք համարում նշել, որ Մերձավոր Արևելքում որոշակի հետաքրքրություններ ուներ նաև հայոց եկեղեցին, քանզի տարածաշրջանում, Բյուզանդիայի հոգևոր-քաղաքական ազդեցության անկմանը զուգահեռ, թուլանում էին հունական օրթոդոքս եկեղեցու դիրքերը, ըստ այդմ էլ հայոց եկեղեցին աշխատում էր գրավել նրա տեղը: Եթե նախարարական որոշ տներ և առանձին հայ իշխաններ փորձում էին զբաղեցնել տարածաշրջանի քաղաքական դատարկության մի մասը, նպատակահարմար էր հայոց եկեղեցին ձգտում էր ձևափոխել հոգևոր-դավանաբանական միջավայրը: Այս ամենը հիմք էր հանդիսանում հայոց եկեղեցու միտումների ու հետաքրքրությունների փոփոխման համար, նրա հոգևոր-մշակութային առաքելությանը տալիս էր նաև քաղաքական նպատակամիտվածություն:

Տարաշերտ աստիճանակարգություն ունեցող տարածքային կազմավորումներում գտնվող հայոց եկեղեցու հիմնական խնդիրն էր ստեղծել տարածաէթնոմշակութային համակարգ, որի կարևորագույն հատկանիշները պետք է լինեին կենտրոնը, թեմերը: Այս հատկանիշներն անհրաժեշտաբար պետք է դրվեին կաթողիկոսության տեղագրական կազմակերպման հիմքում, քանզի

տարածաէթնոշակութային համակարգում բացակայում էին բնական և վարչաքաղաքական սկզբունքների վրա հիմնված կայուն սահմանները: Նշանակում է՝ հայոց եկեղեցին պետք է փորձեր ձևավորել տարածաէթնոշակութային համակարգը ներառող նոր հատկանիշներ, որպեսզի կաթողիկոսությունն ունենար գործունեության սեփական ոլորտ: Վերջինս պետք է կարողանար ապահովել տեղագրական կազմակերպման կառուցվածքային միասնությունը և ժառանգակա-նությունը: Փաստորեն հայոց եկեղեցին ներքաշվեց Մերձավոր Արևելքում ձևավորված բարդ հա-րաբերությունների համակարգ՝ ծանրաբեռնված տարաբնույթ նպատակներով ու խնդիրներով, ո-րոնց մի մասը որոշակի ակնկալիքների ու տրամադրությունների տեսքով ամրագրվում էր հասա-րակական-քաղաքական շրջանակների գիտակցության մեջ: Կարծում ենք՝ պատահական չէ Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսի (1066-1105) Հոռն այցելելու ավանդույթի մեջ «ներմուծված» հետևյալ իրադարձությունը, որը կատարվել էր Եզիպտոսում. «Նիստ դու յԱլեքսանդրիա քաղա-քի յաթոռն Մարկոսի, և ամենայն քրիստոնեայք, որք են ընդ իշխանութեամբ իմով, քեզ լիցին հնազանդ: Եւ ետ մնա պարգևս բազումս, և սիրեաց զնա իբրև զհայր: Եւ յայնմ օրէ եղև աթոռն Ալեքսանդրիոյ հնազանդ աթոռոյ սրբոյն Գրիգորի...»¹: Միտումը պարզ է. հայոց եկեղեցին փոր-ձում էր յուրացնել հոգևոր-դավանաբանական այն ոլորտը, որը զբաղեցնում էր Ալեքսանդրիայի պատրիարքության շրջանակներում բնակվող քրիստոնյա բնակչությունը: Նմանատիպ ձգտում-ները խարսխվում էին Մերձավոր Արևելքում ձևավորված իրավիճակի վրա ու ներառում ցրված հայության համար համահայկական նոր հոգևոր-դավանաբանական կենտրոն ստեղծելու գա-ղափարը:

Մյուս խնդիրը, որը ևս անընդհատ շրջանառվում էր հայոց եկեղեցու քաղաքական հետա-քրքրությունների ոլորտում, Անտիոքի պատրիարքության իրավասությունների յուրացումն էր²: Ան-կախ այն հանգամանքից, որ այս ձգտումներն արտացոլող շարադրանքի վրա զգալի է հեղինա-կի (շարահարողների) ներմուծած տարրերի ազդեցությունը, ի վերջո գերակշռող արտաքին մի-ջավայրի ազդեցությունն է, որը քաղաքական հիմք է հանդիսանում ձևավորված տրամադրու-թյուններին որոշակի նպատակներ հաղորդելու համար: Ալեքսանդրիայի կամ Անտիոքի պատ-րիարքական աթոռներից որևէ մեկը հայոց եկեղեցու կենտրոն դարձնելու տրամադրությունները նախ և առաջ վկայում են պատրիարքական իրավասություններ յուրացնելու ձգտումների մասին: Հասկանալի է, որ անպայման չէ, որ կենտրոնն ունենա աշխարհագրական կամ երկրաչափական դրսևրում: Նրա հիմնական հատկանիշն այն է, որ համարվում է որոշակի գաղափարների ու ար-ժեքների և դրանց իրագործման կազմակերպման կենտրոն: Միաժամանակ այն ի վիճակի չէ նե-րառելու տվյալ հասարակությանը հատուկ արժեքների ամբողջությունը, ուստի կենտրոնի կազ-մակերպման բաղկացուցիչ տարրերից են համակարգերը և ենթահամակարգերը: Կարծում ենք՝ այս տրամադրություններն որոշակի դեր պետք է խաղացած լինեին կաթողիկոսությունը Հայաս-տանից դուրս փոխադրելու հարցում. «Սա (իմա՝ Գրիգոր Գ Պահլավունի (1113-1166) - Գ. Հ.) փո-խեաց զաթոռն հայրապետական ի բերդն, որ կոչի Հոռմկլայ, քանզի իբրև տարան յոյնք առ իւ-րեանս զԳազիկ թագաւորն և գտեր Պետրոս, այնուհետև ոչ եղև յարևելս աթոռն հայրապետա-կան, այլ ընդ իշխանութեամբ յունաց՝ երբեմն ի Սերաստիա, երբեմն ի Ծովքն կոչեցեալ վայր, իսկ սա փոխեաց ի Կլայն Հոռմայական»³: Հոռմկլայում հաստատված հայոց կաթողիկոսությունը պետք է լուծեր մի շարք հիմնախնդիրներ.

ա) Որպես նոր կենտրոն այն պետք է կարողանար պահպանել հայ հասարակական-քաղա-քական և հոգևոր կյանքին յուրահատուկ արժեքները և ձևավորեր այնպիսիք, որոնց կարիքը հա-սարակությունը զգում էր:

բ) Այն պետք է փորձեր վեր կանգնել հայկական տարբեր քաղաքական միավորների մաս-նավոր շահերից և առաջնորդվեր ընդհանրական սկզբունքներով:

գ) Նոր վայրում հաստատված կաթողիկոսությունը պետք է աշխատեր պահպանել հայոց ե-կեղեցու կազմակերպման միակենտրոն համակարգը՝ որպես անցյալի և ապագայի միջև կապի ձև:

դ) Հայաստանում և Մերձավոր Արևելքում ստեղծված քաղաքական իրավիճակը պահան-

¹ Կիրակոս Գամձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 97-98:

² Տես Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 448:

³ Կիրակոս Գամձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 108:

ջում էր ապահովել հայոց եկեղեցու ինքնապահպանման գործընթացը:

Հայոց եկեղեցու զարգացման և տեղագրական կազմակերպման միտումները, մասնավորապես Հայաստանից դուրս ստեղծված թեմերի առկայությունը պահանջում էին նոր տիտղոսի յուրացում: Պատահական չէ, որ «Ամենայն հայոց կաթողիկոս» բանաձևը առաջին անգամ հանդիպում ենք Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի (973-992) կոնդակում, սակայն այն լայն տարածում չգտավ: «Կաթողիկոս հայոց» տիտղոսի տեղափոխումը տարածության և ժամանակի մեջ որոշակի տարակարծությունների տեղիք էր տալիս ու դառնում հակաթոռ կենտրոնների ձևավորման պատճառներից մեկը: Պատահական չէ, որ անընդհատ շեշտվում էր այն զաղափարը, թե Հռոմկլայում հաստատված կաթողիկոսությունը Լուսավորիչների աթոռի իրավահաջորդն էր⁴:

Կաթողիկոսության երկար դեգերումները և դրա կազմակերպման տարածական ընդլայնումը հակասություններ էին ստեղծել տեղագրական փոխհարաբերություններում, որի հաղթահարման փորձերից մեկը 1114 թ. ժողովն էր, որտեղ մշակվեց և ընդունվեց կաթողիկոսների ընտրության նոր կարգը. «Եւ թուի թէ յայս ժողով սահմանեցաւ այն կանոն, զի ընտրութեան կաթողիկոսի լիցի միաձայն հաւանութիւն չորից գլխաւոր աթոռոց արքեպիսկոպոսաց՝ որ ի Մեծն Հայս, այս են՝ Բջնոյ, Հաղբատայ, Թաղէտսի վանաց՝ որ յԱրտագ, և Ստաբևու կամ Տաթևու. և եղաւ վճիռ՝ զի առանց հաւանութեան սոցա անվաւեր լիցի ընտրութիւն»⁵: Կաթողիկոսների ընտրության նոր կարգը լուծելու էր երկու հիմնախնդիր.

ա) Ընտրությունը հնարավորինս գերծ պահել աշխարհիկ իշխանությունների ազդեցությունից, ըստ այդմ էլ սահմանվում էր չորս թեմակալների մասնակցության իրավունքը:

բ) Անկախ այն հանգամանքից, որ Հայաստանից դուրս ձևավորվել էին նոր թեմեր, որոնցից մի քանիսը սկսել էին ակտիվ դեր խաղալ հայոց եկեղեցու կյանքում, փորձ էր արվում պահպանել կաթողիկոսության հայկական կենտրոնի իրավասությունները: Կաթողիկոսության տեղագրական կազմակերպման կառույցը պետք է համապատասխաներ կենտրոնի և թեմերի փոխհարաբերություններին, որոնք ձևավորվել էին բուն Հայաստանում, հակառակ դեպքում նոր կազմավորվող կենտրոնն ի վիճակի չէր վերահսկելու նրանց գործունեությունը և կօտարվեր բուն հայկական միջավայրից: Քաղաքական և աշխարհագրական սահմանների ամբողջականության բացակայության պայմաններում նոր ձևավորվող կենտրոնը, մասնակի բացառություններով, փորձում էր հանգրվանել էթնոմշակութային սահմանների վրա, երբ անհրաժեշտաբար ինքնազիտակցվում էր զուգամերձությունը մեկ կենտրոնի շուրջ:

«Ամենայն հայոց կաթողիկոս» տիտղոսը կանոնաիրավական տեսակետից ամրագրվեց 1243 թ. Մսի ժողովում. «Կոստանդին ծառայ Քրիստոսի և շնորհօք նորին կաթողիկոս ամենայն հայոց, օրհնութեամբ և ողջունի և սիրովն աստուծոյ՝ ծանուցանեն լրման եկեղեցւոյդ Հայաստանայց, վիճակելոց ընդ իշխանութեամբ գաւազանի սրբոց առաքելոցն Թաղէտսի և Բարդղղիմէտսի և մեծավաստակ մահատակին Գրիգորի և մերում կընքութեանս»⁶: Պատկերն ամբողջության մեջ ներկայացնելու նկատառումով բերենք նաև Կոստանդին Ա Բարձրաբերդի կաթողիկոսի (1221-1267) 1253 թ. հիշատակագրությունը. «Ես Կոստանդին ծառայիցն Աստուծոյ ծառայ եւ ողորմութեամբն Աստուծոյ կաթողիկոս ամենայն Հայոց...»⁷: Նշենք, որ բանաձևի «ծառայիցն Աստուծոյ ծառայ» մասը, ամենայն հավանականությամբ, պապականության ազդեցության արդյունք էր, քանզի, սկսած Գրիգորիոս Ա պապից (590-604), օգտագործում էին «servus servorum dei» արտահայտությունը:

Կաթողիկոսության կերպավորման վերոհիշյալ ձևը մի շարք հատկանիշներով տարբերվում էր նախորդից: Նախ և առաջ անհրաժեշտ է առանձնացնել կաթողիկոսության իշխանության աստվածային բնույթի շեշտադրումը, որի դեպքում նրա իրավասությունը տարածվում էր ողջ ավատացյալ հանրության վրա: «Կաթողիկոս հայոց սեղի», «կաթողիկոս ամենայն հայոց» բանաձևերը արտահայտում են կաթողիկոսության կազմակերպման էթնոտեղագրական և մշակութային համամասնությունը: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ աշխարհիկ իշխանությու-

⁴ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի եիշատակարաններ, Ե-ԺԲ դդ.», աշխատասիրությանը՝ Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 272:

⁵ Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 37:

⁶ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 301:

⁷ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար», կազմեց՝ Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 272:


նը և ս փորձում էր յուրացնել «ամենայն հայոց» տիտղոսը. «Լևոն (Դմա՛ Լևոն Գ (1270-1289)- Գ, Հ.) ի Քրիստոս Աստուած հաւատացեալ թագաւոր ամենայն հայոց»:

Բանաձևի հաջորդ մասը վերաբերում է կաթողիկոսության տեղագրական կազմակերպմանը Հայաստանում. «... ծանուցանեմ լրման եկեղեցւոյդ Հայաստանեայց...», ընդամին, այն դրսևորվում է շրջաբերականի տեսքով: Կենտրոնի և թեմերի փոխհարաբերություններից կարելի է առանձնացնել մի շարք սկզբունքներ՝ մասնավորապես տեղագրական, կանոնադավանաբանական և արժեքային: Տեղագրական կազմակերպումը իր մեջ ներառում է հետևյալ հատկանիշները՝ տարածքը, շփման միջավայրը, կենտրոնի սպիտակության աստիճանը և բնույթը: Երկրորդը՝ հիմնականում հանգրվանում է դավանաբանական կազմակերպման և կառավարման ձևերի վրա: Երրորդ սկզբունքը ներառում է այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են արժեքային ընդհանրությունը, հոգևոր կառույցները, «մեծ ավանդույթը», «փոքր ավանդույթը»:

Եթե փորձենք հանրագումարի բերել Հոռմկլայի կաթողիկոսության յուրացրած տեղագրական իրավասությունները, ապա պարզորոշ երևում է, որ կենտրոնը ապաստան էր որոնում պատմական և ավանդութային հատկանիշների շրջանակներում: Կենտրոնի կազմակերպման և կառավարման ֆունկցիան քավարար պայման չէր հանընդհանրական տարածք ձևավորելու համար, ուստի նրա կարևորագույն հիմնախնդիրն էր ապահովել իր լիիրավությունը մշակութաարժեքային համակարգի վրա, որի նշանակությունը տեղագրական կազմակերպման գործում շատ կարևոր էր: Այս ճանապարհով էր ապահովվում թեմերի, թեկուզև խորհրդանշական, մասնակցությունը կենտրոնի գործերին և հաղթահարվում նրանց ինքնամեկուսացվածությունը և կողմնորոշումը մշակութաարժեքային այլ համակարգերի:

Հայոց կաթողիկոսության տեղագրական կազմակերպման կարևորագույն ավանդույթը կապված էր Թաղեոս և Բարդուղիմեոս առաքյալների անունների հետ. ընդամին, հենց Կոստանդին Բարձրաբերոցի կաթողիկոսի գործունեության հետ է առնչվում Թաղեոս առաքյալի անունը կրող վիճակի վերանորոգումը⁸: Յուրաքանչյուր պատմական ավանդույթ իր մեջ ամփոփում է նաև մտացածին փաստեր (իրադարձություններ), և դիմելով անցյալին՝ պարզ գիտակցվում է, որ այն հասկանալի է ժամանակակիցներին, այլ խոսքով՝ այն ձևավորման ու վերարժարծման ժամանակ միշտ այժմեական է: Տվյալ դեպքում «վիճակելոց ընդ իշխանութեամբ գաւազանի սրբոց առաքելոցն Թաղէոսի և Բարդուղիմեոսի» բանաձևը դարձել էր Հայաստանում կաթողիկոսության տեղագրական կազմակերպումը մատնանշող հատկանիշ: Փաստորեն անցյալը «ներթափանցում էր» ներկա, որպեսզի օրինականացնի այն պատկերացումները և գործողությունները, որոնք ներկայում չէին գտնում իրենց հիմքերը:

Քաղաքական և եկեղեցական բազմակենտրոնությունը նպաստավոր պայմաններ ստեղծեց, որպեսզի Հոռմկլայի կաթողիկոսությունը յուրացնի «ամենայն» տեղագրական տիտղոսը:



Հասկանալի է, որ աշխարհագրական մերձակայությունը և Կրիլիկայում ձևավորված հայկական պետականությունն անհրաժեշտ նախադրյալներ էին ստեղծում կաթողիկոսությունը ներառելու վերջինիս պետական համակարգում: Եթե Կրիլիկյան Հայաստանի աշխարհիկ իշխանությանը ի վերջո հաջողվեց կաթողիկոսության նկատմամբ սահմանել ակտիվ վերահսկողություն և այն ներառել իր հետաքրքրությունների շրջանակներում, ապա էական նշանակություն չունեի այն հանգամանքը, որ Հոռմկլան գտնվում էր պետության վարչաքաղաքական սահմաններից


⁸ Տե՛ս Կրթական Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 311:

դուրս, ըստ այդմ բովանդակագրվում էր «ամենայն» հասկացողությունը: Այս դեպքում այն ստանում էր խորհրդանշական բնույթ, քանզի կորցնում էր ընդհանրականության որոշ հատկանիշներ, մասնավորապես տեղագրական կազմակերպման ամբողջականությունը. «Եւ յետ այսց բանից հրաւիրեալ էին զմեզ մեծարանօք զնալ ի ժողովն նորոգ ընտրութեան հայրապետի. որում պատասխանեալ ասացաք. մեք ոչ ենք հասու կամ խորհրդակից եղծման զի և նորոգմանն հաղորդեսցօք. ո՛ր որ ինքնահաճ կամօք եղծումն արար, նոյն և զնորոգ ընտրութիւնն հոգասցէ. և կամք Արարչին յայց լիցի իւրում եկեղեցոյ: Դարծեալ ապա անդրէն նուիրակին և գտանէ նախ քան զպատասխանիսն հաստատեալ յաթոտ կաթողիկոսութեան զՍտեփաննոս ոմն անապատատր գոր Հոռմայեցի կոչէին»⁹: ԺԳ դ. վերջին քառորդն արտացոլող այս տողերը սպառնիչ նկարագրությունն են ձևավորված իրողության, քանզի, անկախ «ամենայն» տիտղոսից, կաթողիկոսությունը պետք է կողմնորոշվեր քաղաքական միավորներից որևէ մեկը.

ա) Հասկանալի է, որ կաթողիկոսությունն ի վիճակի չէր ամբողջովին կրելու միջեկեղեցական այն հարաբերությունները, որոնք ձևավորվել էին ԺԳ դ. երկրորդ կեսին, քանզի դավանաբանական խնդիրների հետնախորքում շոշափվում էին քաղաքական հետաքրքրություններ և շահեր:


բ) Կաթողիկոսությունը Հայաստանի և գաղթօջախների եկեղեցաքաղաքական միավորների հետ փոխհարաբերություններ մշակելու համար կարիք ուներ նաև Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ իշխանության հավանության, որը խնդրո առարկա ժամանակաշրջանում հայկական քաղաքական միավորներից ամենահզորն էր և միջազգային հարաբերություններում ներկայանում էր «թագաւորութիւն հայոց» կարգավիճակով:

Այսպիսին էր ձևավորված իրավիճակը, երբ 1292 թ. եգիպտական զորքերը գրավեցին Հռոմկլան, և կաթողիկոսությունը տեղափոխվեց Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք Միս: Հայոց կաթողիկոսության տեղագրական կազմակերպումը ներառում էր թեմական մի շարք կառույցներ, որոնք կարելի է խմբավորել երեք համակարգի.



Յուրաքանչյուր համակարգ կազմակերպվում էր ենթահամակարգերի միջոցով, ուստի կաթողիկոսության հիմնական խնդիրն էր ձևավորել այնպիսի կենտրոն, որը հավասարաժեռ նշանակություն ունենար բոլոր ենթահամակարգերի համար կամ պետք է կողմնորոշվեր դեպի այդ համակարգերից որևէ մեկը: Հասկանալի է, որ կաթողիկոսության՝ Միս տեղափոխվելու դեպքում Կիլիկյան Հայաստանը դադարում էր նրա թեմական կառույց լինելուց, ուստի աշխատում էին այն ձևավորել որպես եկեղեցու կենտրոն:

Հռոմկլայի անկումից հետո Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ իշխանությունը ամենից մտահոգ կողմն էր, ուստի Հեթում Բ ամմիջապես ժողով է հրավիրում, որտեղ որոշում են. «... շնորհել բերդ ամուր և երկիր առատ Սուրբ Աթոռոյ Լուսաւորչին...»¹⁰: Կիլիկյան Հայաստանի այս քաղաքականությունը՝ «... նորոգել զաթոռ Սուրբ Լուսաւորչին», «... տայ ձեռնադրել կաթողիկոս հայոց», պարզորոշ ցույց է տալիս, որ աշխատում էին համատեղել երկու սկզբունք՝ համահայկական և կիլիկյան: Անկախ այս ձգտումներից՝ Կիլիկյան Հայաստանի եկեղեցաքաղաքական շրջանակներին չհաջողվեց կաթողիկոսությունը դարձնել հայոց եկեղեցու տեղագրական-դավանաբանական կազմակերպման կենտրոն: Ասվածի հավաստում կարող է լինել Սսի 1342 թ. ժողովի մասնակիցների տեղագրական կառույցը.



⁹ Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն մահաճգին Միսական, էջ 440-441:

¹⁰ «Հիշատակարաններ, ԺԳ դար», էջ 691-692:


Վերն արդեն նշեցինք կաթողիկոսի ընտրության տեղագրական այն կարգի մասին, որը հաստատվել էր ԺԲ դ. առաջին կեսին, իսկ այժմ փորձենք հիմնախնդիրը քննարկել ԺԳ դ. երկրորդ կեսին ձևավորված հարաբերությունների շրջանակներում: Պատկերն ամբողջության մեջ ներկայացնելու համար բերենք երկու վկայություն, որոնցից առաջինն արտացոլում է ԺԳ դ. երկրորդ-կեսին ձևավորված իրավիճակը, իսկ երկրորդը՝ վերջին. «... Բայց զդրսս զայստսիկ որ անմերհակ երևին, ցուցցուք. թեպէտ և մերոցս ոմանց քար ընդ ոտն թուի:

Առաջինն՝ Կաթողիկոսն Աղուանից: Երկրորդն՝ Եպիսկոպոսն Սիւնեաց, զոր զկնի տորս նախապատուեցին կաթողիկոսքն Հայոց: Երրորդ՝ Եպիսկոպոսն Հաղբատայ, որ ունի զտեղապահութիւն Կաթողիկոսին Վրաց, զտեսչութիւն բոլոր Գուգարաց: Չորրորդ՝ Եպիսկոպոսն Ռշտունեաց և Մոկաց, որ նստի ի Տոսպ գաւառի յԱղթամար կղզի...»¹¹:


բ) «... Եւ յառաջ՝ զայս ասենք զոր ի դէպ է որ մեր հայերուն արևելցոյ մեծերուն զիրքս զիտացուցել ենք, և կեցուցել: Առաջինն Օրպելին, որ է Սիւնեաց արհիեպիսկոպոս, որպէս հոգևոր իշխան զուրվ, նոյնպէս և մարմնատուր և իւր ընգերացն ցուցաք զգիրքսն, և հաստատեցաք այս տարի: Եւ յանցեալ տարին տէր Յոհաննէսի, առաքելոց եպիսկոպոսի: Եւ ի միւս այլ ամին Բջնեցուն, և Վարազեցեաց...»¹²: Համարելով այս երկու տեղեկությունը՝ կարելի է եզրակացնել.

ա) Ամեն դեպքում, անկախ նվիրապետական աթոռների տեղագրական փոփոխությունից, չորսի գաղափարը միշտ պահպանվում է կենտրոնի լիիրավությունը ամբողջացնելու համար, ընդամին՝ բոլորն էլ ներկայացնում են Մեծ Հայքը:

բ) Առաջին դեպքում պարզորոշ երևում է, որ կառույցի վերին դասաշարը հանդես է գալիս ոչ միայն որպես կենտրոնի տեղագրական կազմակերպման ձև, այլև կաթողիկոսի ընտրության տեղագրական համակարգ.



Իսկ երկրորդ դեպքում այն ներկայանում է որպես կաթողիկոսության տեղագրական-դավաճաքանական կազմակերպման ձև.



զ) Առաջին դեպքում խնդիրն արժարժվել է՝ նպատակ ունենալով ներկայացնել հայոց կաթողիկոսության համապատկությունը տիեզերական եկեղեցու համակարգում, մինչդեռ երկրորդում՝ համահայկական իրավասությունները ընդգծելու նկատառումով:

Ստեփանոս Օրբելյանը չի նշում, որ Հոռմկլայի անկումից հետո Սյունյաց թեմը իրավիրվել էր մասնակցելու նոր կենտրոնի տեղի ընտրության խնդրի լուծմանը: Մեր կարծիքով, Սյունյաց աթոռը իրավիրված պետք է լիներ, սակայն պատմիչը «գիտակցաբար» մոռացության է մատնել փաստը՝ հաշվի առնելով հետևյալը.

ա) Հեթում Բ ու նրա կողմնակիցների վարած դավաճաքանական քաղաքականությունը, որի շրջադարձը Կոստանդին Բ Կատուկեցի կաթողիկոսի (1286-1289) գահընկեցությունն էր, որոշակի տարածայնություններ էր առաջացրել Սյունիքում:

բ) Սյունյաց եկեղեցաքաղաքական միջավայրում արդեն խմորվում էր կաթողիկոսությունը Մեծ Հայք տեղափոխելու գաղափարը: Անկախ այն հանգամանքից, որ Ստում հաստատված կաթողիկոսությունը փորձում էր հանդես գալ որպես համահայկական կենտրոն, այն ի վիճակի չե-

¹¹ «Պատասխանիք Մխիթարայ քահանայի Սկեւոացոյ, Յաղագս համապատուութեան երկրտասան Առաքելոց», Յերուսաղէմ, 1865, էջ 67-68:

¹² Կղէմէս Գազարոս, Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցոյն ընդ մեծի սուրբ եկեղեցոյն Հռովմայ, հ. 1, Հոռմ, 1650, էջ 441:

ղավ գուգորդելու տարաբնույթ այն հետաքրքրությունները, որոնք առկա էին այն ներառող համակարգերի ներսում. «Այլ և ազգիս Հայոց քահանայապետութիւն և թագաւորութեան զարինադրութիւն նախ պարտ էր յԱշտիշատ Տարաւնաւ հաստատել և ի Վաղարշապատ, յԵկեղեց գաւառ և ի Դարանաղեաց, որք աւելի ունին քան զվեց հարիւր զաւագան կարգեալ, և ապա մասնատրս Կիլիկիէ յանդաման յաւղէր: Եւ թէ անփոք առնեն զարեւելից՝ ապա ում կոչին քահանայապետս կամ թագաւորս»¹³: Եթէ տվյալ ենթատեքստում «Հայոց քահանայապետութիւն և թագաւորութեան զարինադրութիւն» հասկացության շրջանակներում աշխարհիկ և հոգևոր իշխանությունների գործունեությունը ներկայացնում է համատեղ, ապա կարելի է առանձնացնել կաթողիկոսության տեղագրական-դավանաբանական կազմակերպման սկզբունքը՝ Աշտիշատ, Եկեղեց, Դարանաղեաց, Վաղարշապատ:

Կենտրոնի կազմակերպման հիմնական հատկանիշներից մեկը տարածքային-տեղագրական սկզբունքն էր, ըստ այնմ էլ յուրաքանչյուր թեմ ներառում էր որոշակի տարածք, որի ամբողջությունը կազմում էր «կաթողիկոս» տիտղոսի անբաժանելի մասը. «... կաթողիկոս տիեզերական ի դրանէ Հոնաց և Լփնաց, ի ծովէ Կասպից և ի լեռնէ Կովկասեաց մինչև ի սահմանս եգիպտական և ի ծովն արևմտային...»¹⁴:

Էթնոքաղաքական և մշակութային հատկանիշներով առանձնացված միջավայրում բավական բարդ է կենտրոնի տարբերակման խնդիրը, քանզի այն պետք է ներառի կենտրոնին յուրահատուկ քոլոր հատկանիշները: Այդպիսի կարգավիճակի կարող է հավակնել էթնիկական ընդհանրության ձևավորման պատմական տարածքը, քանզի դուրս՝ նույն ընդհանրության ստեղծած քաղաքական կառույցը, ինչպես նաև՝ այլ տարածքում ձևավորված մշակութային միջավայրը: Նման հարցադրման դեպքում Սսի կաթողիկոսությունը չի կարելի միարժեքորեն որակել համընդհանրական կենտրոն: Եկեղեցական կառույցի որևէ միավորի առանձնանալը նշանակում էր՝ այդ տարածքում կենտրոնի տեղագրական իրավասություններն այլևս չէին տարածվում. «Գրեալ էիր և զայս թէ զայդ կրօնքդ մեք ոչ կամինք առնել զի ի ծովէն Պօնտոսի մինչև ի Կասպից ծովն ի սուրբ Գրիգորի օրէնքն կամք. յայսմ քանի է ինչ որ իրաւ է և է ինչ որ ամենևին սուտ իրաւ զստայնմ. զի ի ծովէն Պօնտոսի մինչև ի ծովն Կասպից ընդ Հոռոմ է որ Վրացի և սոքա ճշմարտութեամբ սուրբ Գրիգորի օրէնքն կանք. զի Հոռոմս եկեղեցոյն միաբանեն ընդ տօնից և խորհրդոյ ջրոյն...»¹⁵: Նման դեպքերում «հայոց կաթողիկոս» տիտղոսի տեղագրական բովանդակությունը որոշակի փոփոխություններ է կրում. «... ի ժամանակս այսմիկ (իմա 1311) էր թագաւոր աշխարհին Կիլիկիոյ Ալշին և կաթողիկոս Կոստանդին Կասպադովկեցին, որոց տէր առաջնորդեսցէ զհոգևոր առաջնորդութիւն և զմարմնաւորն ընդ երկայն ատուրս...»¹⁶: Պատահական չէ, որ խնդրոտ առարկա ժամանակաշրջանում կաթողիկոսությանն այդպես էլ չհաջողվեց ստեղծել թեմերի հաստատուն տեղագրական դասաշար:

Կենտրոնի և թեմերի տեղագրական փոխհարաբերություններն ընդգրկող համակարգը քարդ ու խճճված էր, քանզի բացակայում էր նաև տարածքային ընդհանրության սկզբունքը: Եթէ Սսի կաթողիկոսությունը փորձում էր ներկայանալ որպես եկեղեցու կենտրոն, ապա պետք է պահպաներ ավանդագրված սկզբունքները. «... վասն որոյ ասէ քազմութիւն ժողովեցան. սուտ ասէ. զի սակաւք էին և ոչ քազումք. պարտ էր յամենայն Հայաստանեայցս առաքել և ժողովել. եթէ ամենայնք հաւանեալ էին, ապա զայդպիսի նորայնութիւն յեկեղեցի մուծանել. և թէ ոչ ի բաց ընկնուլ: Որ իրաւունք է այդ ինքնահաճոյ մտաց ախորժակօք գրել և առ ամենեսեան առաքել թէ ընկալարուք և նաև յոյժ հաւանութեամբ ասէ ընկալարուք: Դուք օրինադիրք և դուք ընկալույք. կարի գեղեցիկ բայց չէ ճշմարիտ...»¹⁷:

Ընդհանուր հայտարարի բերելով վեղ շարադրվածը՝ կարելի է եզրակացնել. տարահարթ աստիճանակարգություն ունեցող տարածքային կազմավորումներում գտնվող հայոց եկեղեցու հիմնախնդիրն էր ստեղծել տարածաէթնոմշակութային համակարգ, որի հիմնական հատկանիշները պետք է լինեին կենտրոնը, թեմերը և դաշտը: Հայոց եկեղեցական միջավայրը ներառում էր

¹³ «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հատոր երրորդ, կազմեց՝ Նորայր եպս. Պողոտեան, Երուսաղէմ, 1968, էջ 613:

¹⁴ Մտեխիմանու Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 451:

¹⁵ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր, 3522, էջ 174ա:

¹⁶ «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 81:

¹⁷ Մատենադարան, ձեռ., 9622, էջ 745:

երեք համակարգ (Մեծ Հայք, Կիլիկյան Հայաստան, գաղթօջախներ), որոնցից յուրաքանչյուրը հավակնում էր կենտրոն դառնալու իրավասությամբ: Տարածաէթնոմշակութային համակարգի ձևավորման դեպքում անպայման չէ, որ կաթողիկոսության գրադեցրած տեղագրական միջավայրը երեք համակարգերի համար դառնար համընդհանրական կենտրոն: Խնդիրն ավելի բարդացավ, երբ 1292 թ. եգիպտական սուլթանության գորքերը գրավեցին Հռոմկլան, և կաթողիկոսությունը տեղափոխվեց Սիս: Կիլիկյան Հայաստանում հաստատված կաթողիկոսության առաջնահերթ խնդիրն էր ձևավորել նոր կենտրոն, որն ունենար համահայկական իրավասություններ և ճանաչում: Սսի կաթողիկոսության մյուս հիմնախնդիրը տեղագրական-դավանաբանական կազմակերպումն էր, քանզի «հայոց կաթողիկոս» տիտղոսի բաղկացուցիչ հատկանիշներից մեկը տարածքային համընդհանրականությունն էր: Անկախ Սսի կաթողիկոսության գործադրած համառ ջանքերից՝ այս խնդիրներն ամբողջության մեջ չլուծվեցին:

Г. С. Арутюнян - Вопросы топографической организации армянского католикосата во второй половине XIII века. - После падения династии Багратидов в Ани для армянского католикосата сложилась трудная и напряженная ситуация - у него не стало резиденции, он подвергался внешнему и внутреннему вмешательству и давлению. Основанный в Ромкле, затем в Сисе католикосат был поставлен перед важной проблемой - организовать резиденцию. Топографическая организация армянского католикосата располагалась в трех сферах: Великая Армения, Киликийская Армения, армянские колонии, каждая из которых претендовала на право считаться центром армянской церкви. В этом случае первоочередной задачей имеющего разноуровневую иерархию католикосата становилось создание для находящейся в территориальном становлении армянской церкви территориально-этно-культурной структуры, основными признаками которой были бы - центр, епархия, нива.

В 1292 году образованный в Сисе католикосат пытался сформировать новый церковный центр, который имел бы всеармянскую компетентность и признание.

Другая проблема - топографически-богословская организация, поскольку к числу составляющих компонентов относилась территориально-каноническая всеобщность. Независимо от приложенных усилий Сиса эти задачи в целом не были решены.